

Արձանագրություն №2 (286)

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015 թ.-ի դեկտեմբերի 24-ի նիստի

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Նա տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 21-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. Մագիստրոսական աշխատանքների թեմաների հաստատում:
2. Գիտական աշխատանք ղեկավարելու ԲՈՀ-ից թույլտվություն ստանալու մասին:
3. Հրատարակմանը երաշխավորելու մասին:
4. 2015 -2016 ուս. տարվա մագիստրոսական ծրագրերի հաստատում:
5. Վանաձորի մանկավարժական ինստ-տի հայցորդի թեկնածուական թեզի հաստատման մասին:
6. Ընթացիկ հարցեր:

1. Ամբիոնների վարիչներ Լ.Բրուսյանը և Լ.Հակոբյանը ներկայացրեցին մագիստրոսական աշխատանքների թեմաները: Թեմաները քննարկվեցին, թեև արդեն քննարկվել էին ամբիոններում: Ցանկը կցվում է:

2. ԵՊՀ ռուս գրականության ամբիոնի վարիչ, ք. գ. թ., դոց. Լևոն Գեորգիի Հակոբյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցը: Ելույթ ունեցողները՝ պրոֆ. Մ.Այվազյանը, պրոֆ.Մ.Ջանփոլադյանը, դոցենտ Պ.Բալայանը նշեցին, որ Լ.Հակոբյանը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի թեկնածուական ատենախոսության ղեկավարման համար ներկայացվող պահանջները. լինելով ռուս գրականության ամբիոնի վարիչ՝ նա հեղինակ է մոտ երեք տասնյակ գիտական աշխատությունների: ՈՐՈՇԵՑԻՆ.- ԵՊՀ ռուս գրականության ամբիոնի վարիչ, ք. գ. թ., դոց. Լևոն Գեորգիի Հակոբյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցով դիմել ՀՀ ԲՈՀ-ին:

3. ԵՊՀ-ի դասախոսներ Վ.Հարությունյանի, Ն.Այվազյանի, Մ.Կեսայանի, Գ.Բալյանի, "Учебник по русскому языку (базовый уровень) для иностранных граждан и зарубежных армян" խորագրով դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը: Արտահայտվեցին – դոցոնտ Պ.Բալայանը, դոց. Բ. Խոջումյանը: Որոշեցին – Վ.Հարությունյանի, Ն.Այվազյանի, Մ.Կեսայանի, Գ.Բալյանի, "Учебник по русскому языку (базовый уровень) для иностранных граждан и зарубежных армян" դասագիրքը

Երաշխավորել տպագրության և հրատարակելու հարցով միջնորդել համալսարանի հրատարակչության խորհրդին:

4. Քննարկվեց 2015 -2016 ուս. տարվա մագիստրոսական ծրագրերի հաստատման հարցը: Հաստատվեցին հետևյալ ծրագրերը.

ա. ռուսաց լոդու և գրականություն

բ. լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում

Եթե հայտեր լինեն կվերենայենք ծրագրերը:

5. Վանաձորի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի հայցորդ Սվետլանա Սերոժայի Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցերը: Որոշեցին. Հաստատել Վանաձորի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի հայցորդ Սվետլանա Սերոժայի Բարսեղյանի ատենախոսության հետևյալ թեման` ”Лингвокультурные характеристики армянско-русского билингва”:

6. Ընթացիկ հարցեր: Օրակարգի **6-րդ հարցը** նվիրված էր աշխատանքային կարգապահությունը: Քննարկվեցին նաև ստուգարքային գրքույքների ստուգման արդյունքները:

Գիտական խորհրդի նախագահ`

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար`

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ

